ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝

«---------- -» ---------- 2022 թ.

Digitally signed by GALOYAN VARDUHI
7705800268
Date: 2022.09.13 13:44:20 GMT+04:00

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

<<ՀՀ Գեղարքունիքի մարզի Հայրավանք գյուղի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

Իններորդ դասարան

ուսումնական հաստատության անվանումը, դասարան

Թադևոսյան Ռուզան Նորիկի

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

« 2022- 2023 » ուսումնական տարի

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը)

2022-2023 ուստարում Հայրավանքի միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանում սովորում են 8(ութ) աշակերտներ՝ 2 տղա, 6 աղջիկ: Դասարանում բոլոր աշակերտները համախմբված են, ընկերասեր, պատրաստակամորեն կատարում են դասղեկի և դասավանդող ուսուցիչների հանձնարարությունները: Աշակերտները խնամքով են վերաբերվում դպրոցի գույքին, հետևում են դասասենյակի մաքրությանը:

2. **Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում**

2022-2023 ուստարում նախատեսվում է հետևյալ աշխատանքները՝

1. Դասասենյակի կահավորում :

2. Ընտրել դասարանի ակտիվ, ձևավորել աշակերտական և ծնողական խորհրդի կազմը:

3. Առանձնակի ուշադրություն դարձնել աշակերտների ուսման առաջադիմության բարձրացմանը և կարգապահությանը:

4. Դասամատյանի, աշակերտական օրագրի և այլ փաստաթղթերի վարում (էլեկտրոնային):

5. Կրթության գործընթացում դասարանական կոլեկտիվի փոխհարաբերությունների վերլուծություն, համակարգում, կարգավորում:

6. Աշխատանք ծնողների հետ

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն

Բարձրացնել ազգային ինքնագիտակցությունը, սեր ներշնչել ազգի, կտնի, և ազգային արժեքների հանդեպ: Սերմանել ազնվություն, կարևորել բարոյական չափանիշները, քրիստոնեական և համամարդկային արժեքները:

3.2 Գեղագիտական դաստիարակություն

Դաստիարակել մարդկային փոխհարաբերություններում , բնության մեջ, արվեստում գեղեցիկը տեսնելու , ընկալելու և վերապրելու ունակություն, որը կնպաստի անձի անհատականության ճիշտ ձևավորմանը:

3.3 Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն

Սիրել հայրենիքը, լինել հայրենասեր, կարևորել ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը: Գիտակցել և գնահատել ազգային արժեքները:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն

Բացատրել և պահանջել, որ աշակերտները հետևեն իրենց ֆիզպատրաստությանը: Կոփեն իրենց մարմինները ֆիզվարժությունների և հնարների միջոցով, քանի որ սպորտը տալիս է կամքի ուժ, հոգու և մարմնի ամրություն:

3.5 Աշխատանքային դաստիարակություն

Աշակերտներին ներգրավել հասարակական աշխատանքներում: Միայն աշխատասեր մարդը կարող է գնահատել իր և ուրիշի աշխատանքը: Աշխատանքը մարդուն դարձնում է ուժեղ, գեղեցիկ, նպատակասլաց:

3.6 Բնապահպանական դաստիարակություն

Աշակերտների մոտ ձևավորել բնության նկատմամբ հարգանք և խնամքով վերաբերմունք: Բնությունն է կյանքի աղբյուր , որ իր բարիքները շռայլորեն պարգևում է մեզ:

4. Դպրոց-ընտանիք կապը

Ավելի արդյունավետ դարձնել ընտանիք- դպրոց փոխազդեցության համակարգը՝ բարձրացնելով փոխադարձ վստահության մակարդակը:
Կազմակերպել ծնողական ժողովներ (թեկուզ և հեռավար) և անհատական զրույցներ:

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	Կատարման ամսաթիվ	Կատարվել է
I	Դասարանի ակտիվի ընտրություն:Կազմակերպչական հարցեր:		
II	Զրույց-քննարկում ,,Աշակերտների իրավունքներն ու պարտականությունները դպրոցում,, թեմայով:		
III	Շնորհավոր տոնդ , անկախ Հայաստան: Անկախության անգնահատելի դերն ինձ համար:		
IV	Կոնֆլիկտ- ինչ է այն, որոնք են նրա առաջացման պատճառները և ինչպես խուսափել դրանից:		
V	Սիրենք ու հարգենք մեր ուսուցիչներին: Յուրաքանչյուրիս կյանքում մեծ է դպրոցի և ուսուցչի դերը:		
VI	Աշխարհընկալում: Ես հարգում եմ նաև քո կարծիքը: Փոխըմբռնում:		
VII	Բարձրացնենք հասարակական աշխատանքի հանդեպ աշակերտների պատասխանատվության զգացումը:		
VIII	Քննարկում<< Նախընտրելի մասնագիտության նկարագիրը>> թեմայով:		
IX	Հավատ , գաղափարախոսություն, պատմություն և ժամանակ:		
X	Բարոյականության դասերը մարդկության պատմության մեջ: Անտարբեր չլինենք ուրիշի ցավ ու վշտի հանդեպ:		
XI	Տարբեր սերունդների անխուսափելի բախումներ և դրանց ճիշտ հանգուցալուծումները:		
XII	,, Ինչպես պաշտպանվել բնական աղետներից,, թեմայով զրույց-քննարկում:		
XIII	Առաջին կիսամյակի արդյունքների նախնական ամփոփում:		
XIV	Ամանորյա շնորհավորանքներ և տոնական օրերին զգուշության և զգոնության պահպանում:		
XV	Երկրորդ կիսամյակի խնդիրները:Լինենք ուշիմ ու աշխատասեր:		
XVI	Պահենք ու պահպանենք մեր առողջությունը, պայքարենք առողջ ու կենսուրախ լինելու		

	համար։		
XVII	Մեր բանակը հզոր է ու անպարտելի։ Զորավիգ լինենք մեր հայրենիքին ու հայ զինվորին։		
XVIII	Վնասակար սովորույթների ազդեցությունը մարդու օրգանիզմի վրա։		
XIX	Հոգևոր կյանքի կարևորությունը մարդ լինելու և մնալու հարցում։ Մեր եկեղեցական տոները։ Տյառընդառաջ։		
XX	Մարդիկ, որոնց շնորհիվ մենք ապրում ենք։		
XXI	Խոսենք հայերեն։ Անաղարտ պահենք մայրենին։		
XXII	Պատրաստ լինենք քաղպաշտպանության օրվան։		
XXIII	,,Մայրը սիրտն է հայրենիքիս,,։ Կնոջ դերն ընտանիքում։		
XXIV	Ապահով համացանց։ Եվս մեկ անգամ զրուցել վնասակար խաղերի մասին։		
XXV	45 րոպե աշխարհի շուրջ։		
XXVI	Աղբի սխալ կուտակման հետևանքները։ Ինչպես տեսակավորել աղբը։		
XXVII	Ինչպես եմ պատկերացնում ինձ ավագ դպրոցում։		
XXVIII	Ոչ, ցեղասպանությանը։ Թող ոչ մի ազգ չտեսնի այն , ինչ տեսավ հայը։		
XXIX	Մայիսի 1-ը աշխատավորների համերաշխության միջազգային օրն է։		
XXX	Խաղաղությունը կյանք է ։ Լինենք հանդուրժող միմյանց հանդեպ։		
XXXI	Դեռահասների հայացքների ու համոզմունքների մասին։		
XXXII	Լինենք մեծահոգի , ներողամիտ, հանդուրժող, հասկանանք միմյանց և ուրիշներին։		
XXXIII	Երկրորդ կիսամյակի արդյունքների նախնական ամփոփում։		
XXXIV	Տարեկան գնահատականների ամփոփում։Պատրաստվենք քննություններին։		